ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆ

«15» 03 2024թ. Թիվ 85-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի ԹԻՎ 173-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով.

Հրամայում եմ.

1. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 2022 թվականի հոկտեմբերի 5-ի «Գաղտնի քննչական գործողությունների, կապի օպերատորներին ներկայացվող տեղեկատվության պահանջի կատարման կազմակերպման կարգերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 2021 թվականի սեպտեմբերի 1-ի թիվ 116-Լ և 2021 թվականի նոյեմբերի 5-ի թիվ 149-Լ հրամաններն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 173-Լ հրամանի N 1 հավելվածի 2-րդ և 3-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Կոմիտեի կենտրոնական մարմնի տնտեսական հանցագործությունների և մաքսանենգությունների քննության գլխավոր վարչության, զինվորական քննչական

գլխավոր վարչության, Երևան քաղաքի քննչական վարչության ստորաբաժանումներում, մարզային քննչական վարչություններում և դրանց ստորաբաժանումներում ներքին դիտում, արտաքին դիտում և հեռախոսային խոսակցության բովանդակության վերահսկման (գաղտնալսելու) վերաբերյալ հանձնարարություններն ու դատարանի որոշումների պատճենները հետաքննության մարմին են ուղարկվում «գաղտնի» դրոշմագրով՝ ստորաբաժանման պետի կամ նրա տեղակալի ուղեկցական գրությամբ՝ գաղտնի գործավարությանը ներկայացվող պահանջների պահպանմամբ:

3. Կոմիտեի կենտրոնական մարմնի ստորաբաժանումներում (բացառությամբ տնտեսական հանցագործությունների և մաքսանենգությունների քննության գլխավոր վարչության) ներքին դիտում, արտաքին դիտում և հեռախոսային խոսակցության բովանդակության վերահսկման (գաղտնալսելու) վերաբերյալ հանձնարարություններն ու դատարանի որոշումների պատճենները տվյալ ստորաբաժանման պետի կամ նրա տեղակալի ուղեկցական գրությամբ ուղարկվում են հետաքննության մարմին Կոմիտեի առաջին բաժնի միջոցով՝ գաղտնի գործավարությանը ներկայացվող պահանջների պահպանմամբ:»:

2. Սույն հրամանն ուղարկել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների պետերին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի գլխավոր քարտուղարին և առաջին բաժնի պետին:

Ա. ՔՅԱՐԱՄՅԱՆ